ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 391
*հերթական համարը*

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

*ՀՀ Արարատի մարզի Արարատ համայնքը (Պարույր Սևակ բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ*

*(Արարատ համայնքի (Պարույր Սևակ բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)*

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

*ՀՀ Արարատի մարզի Արարատ համայնքը (Պարույր Սևակ բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Արարատ-9 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝*

| Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը | Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը |
|---|---|
| 03-078-0030-0015 կադաստրային ծածկագրով 1.0 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողեր | 03-078-0030-0015 կադաստրային ծածկագրով 1.0 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության արդյունաբերական օբյեկտների հողեր |

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Արարատ համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Պարույր Սևակ բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Արարատի մարզի Արարատ համայնքի Պարույր Սևակ բնակավայրի հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

| | | |
|---|---|---|
| *Հանձնաժողովի նախագահ՝* | | |
| | | Ա.Ղուլարյան |
| *Հանձնաժողովի քարտուղար՝* | | |
| | | Հ.Դավթյան |

Երևան, « 9 » «նոյեմբերի» 2023 թ.